ԱՌԱՐԿԱ՝ ՄԱՅՐԵՆԻ

ԴԱՍԱՐԱՆ՝ 2-ՐԴ

ԴԱՍԱԳԻՐՔ՝ ԱՆԺԵԼ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ, ԼԻԼԻԹ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թեմա՝ *Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ*
Ենթաթեմա՝ *Ի՛մ Հայաստան, ի՛մ հայրենիք*
Ժամանակահատված՝ 5շաբաթ /35 ժամ, որից 10 ժամը գրավոր/

1. Իմ անուշիկ Հայաստան /էջ 129/ -2 ժամ
2. Մեր տան մեջ /էջ 130/- 2 ժամ
3. Երգ Հայրենիքի մասին /էջ 131/- 2 ժամ
4. Ազգային տոն /էջ 133-134/- 3 ժամ
5. Մանուկ Դավիթը /էջ 135-137/ -4 ժամ
6. Այծեմնիկը /էջ 141-142/- 3 ժամ
7. Քաջ Վարդանը /էջ 144-145/- 4 ժամ
8. Անմահ զանձերը /էջ 149/- 3 ժամ

Ամփոփում -2 ժամ

Նպատակը՝

- Բացահայտել սեփական ծննդավայրը, բնակավայրը։
- Ավելի լավ ճանաչել սեփական հայրենիքը՝ մայրաքաղաքը, խոշոր քաղաքները, գյուղերը։
- Ծանոթանալ ազգային առանձնահատկություններին։
- Ծանոթանալ հայկական գյուղերի և քաղաքների կյանքին վաղ ժամանակներում ու հիմա։
- Ինքնուրույն բնութագրի իր բնակավայրը։

Վերջնարդյունքներ՝

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, տեղեկություններ և հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։
♦ Իմանա որտեղից ենք գալիս, որն է Հայի առանձնահատկությունը։
♦ Իմանա, թե ովքեր են մեր հարևանները։
♦ Ճանաչի հայկական բնաշխարհում իր բնակավայրը։
♦ Իմանա հայի՝ որպես առաջին քրիստոնյա լինելը ։
♦ Կարողանա արտահայտիչ կարդալ և վերարտադրել մտքերը, կառուցի կապակցված խոսք։
♦ Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։
♦ Կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ։
♦ Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։
♦ Տարբերի հոմանիշ և հականիշ իմաստները, կիրառի խոսքում
♦ Իմանա առարկա ցույց տվող բառերը։

**Հաջողություններ՝**

✓ **Սովորողները կիմանան.**

➢ որն է հայրենիքը և որտեղից է առաջացել Հայաստան բառը
➢ իմանա ՀՀ սահմանակից պետությունները
➢ իմանա, որ առաջինը Քրիստոնեությունը ընդունել են հայերը, ճանաչի խաչը որպես քրիստոնեության խորհրդանիշ
➢ կարադա ոչ ծավալուն գրական տեքստեր, կարողանա վերարտադրել ընթերցածը։
➢ կարողանա կիրառել իմաստով իրար մոտ և հակառակ բառերը գրավոր և բանավոր խոսքում։
➢ տարբերի առարկա ցույց տվող բառերը։

## Վերնագիր՝ Իմ անուշիկ Հայաստան /էջ 129/ -2 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։
♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանի ուղղախոսական կանոնները։
♦ Հակիրճ իմանա Հայաստանի պատմությունը՝ սկսած Նոյի տապանից։
♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։
♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։
♦ Իմանա հատկանիշ ցույց տվող բառերը։
♦ Զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական, ստեղծագործական գործունեությամբ։
♦ Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։
♦ Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։
♦ Արժևորի ազգային տոների դերն ու նշանակությունը։
♦ Արժևորի իր հայ լինելու լինելիությունը։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։
➢ Արտահայտիչ արտասանել չափածո գրական ստեղծագործությունը ։
➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի վերաբերյալ։
➢ Կատարել ստեղծագործական բնույթի աշխատանքներ։
➢ Կատարել լեզվական բնույթի առաջադրանքներ։

➢ Ճանաչի իր հայրենիքը ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության և մշակույթի մասին։

**Լեզվական գիտելիքներ՝**

○ Բառերի տեսակներն ընստ կառուցվածքի՝ բարդ և պարզ

**Հարցեր՝**

- Ինչպե՞ս է առաջացել Հայաստան անունը, հիշի՛ր 1-ին դասարանում անցածը։
- Քո կարծիքով, ինչու՞ է հեղինակը մայր և հայր բառերի հետ օգտագործել մայրենի, հայրենի բառերը։
- Ինչ է գրված զանգի վրա, այն ծանոթ է քեզ, թե ոչ,կարդա և մեկնաբանիր նշանակությունը։
- Քրիստոնեությունը խորհրդանշող ի՞նչ պատկերներ կան նկարում։
- ՀՀ-ի խորհրդանիշներից որո՞նք են նկարում պատկերված։
- Ուշադիր նայիր թեմատիկ նկարը և խոսիր նրա յուրաքանչյուր պատկերի մասին առանձին-առանձին /Գեղարդ, Սիս ու Մասիս, Նոյյան տապան, գինու կարաս…./
- Զանգը որտեղից է կախված և ինչ է խորհրդանշում ժապավենի յուրաքանչյուր գույնը։

**Առաջադրանքներ՝**

✓ Տրված աղյուսակում համապատասխանաբար գրի՛ր՝ ի՞նչ գիտես Հայաստանի մասին և ի՞նչ կցանկանաս իմանալ։

| Գիտեմ | Ուզում եմ իմանալ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

✓ Թեմատիկ նկարից դու՛րս գրիր <<հայկական>> պատկերներ արտահայտող բառերը։

Օրինակ՝ Մասիս, Էջմիածին,… :

✓ Արտագրի՛ր բանաստեղծությունը՝ <<անուշ>> բառը փոխարինելով իմաստով մոտ այլ բառով։

✓ Թեմատիկ նկարից օգտվելով լրացրու՛ աղյուսակը՝ հետևելով օրինակին։

| **Առարկա** | **Գործողություն** |
|---|---|
| տապան | Ճախրում է |
| | |
| | |
| | |

## Մեր տան մեջ /էջ 130/ 2 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Խոսելիս ճիշտ արտասանի բառերը՝ պահպանելով հայրերենի ուղղախոսական պարզ կանոնները։

♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում։

♦ Հասկանա բանաստեղծության բովանդակության և նկարագրդման կապը։

♦ Զգա ժամանակի կարևորությունը և կարողանա ճիշտ պլանավորել իր անելիքները։

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, տեղեկություններ և հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։

♦ Իմանա որտեղից ենք գալիս, որն է Հայի առանձնահատկությունը։

♦ Իմանա, թե ովքեր են մեր հարևանները։

♦ Ճանաչի հայկական բնաշխարհում իր բնակավայրը։

♦ Իմանա հայի՝ որպես առաջին քրիստոնյա լինելը ։

♦ Կարողանա արտահայտիչ կարդալ և վերարտադրել մտքերը, կառուցի կապակցված խոսք։

♦ Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։

♦ Կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ։

♦ Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։

♦ Արժևորի ընտանիք հասկացությունը և կառուցվածքը։

♦ Տարբերի հոմանիշ և հականիշ իմաստները, կիրառի խոսքում

♦ Իմանա առարկա ցույց տվող բառերը։

**Առաջարկվող գործունեության ձևերը**

- Ինքնարատհայտման տարբեր ձևերով ու եղանակներով արտահայտիմտքերն ու զգացմունքները
- Կարդա բանաստեղծությունը և խոսի բովանդակության մասին։
- Մի քանի նախադասությամբ գրավոր արտահայտի կարծիքը , վերաբերմունքը տան անդամների և հայրենիքի նկատմամբ։
- Կարողանա կապ ստեղծել հայրենիքի և ընտանիքի միջև։
- Բացատրի նորածանոթ բառերն ու արտահայտությունները։
- Նկարի իր պատկերացրած հայրենիքն իր տան մեջ։
- Խմբային աշխատանքի միջոցով պատկերել քառյակների ընդահանուր բովանդակությունը՝ մայրիկ, հայրիկ, հայրենիք։
- Աշխատանք լեզվական նյութի շուրջ։

**Լեզվական նյութ**

✓ Առարկա ցույց տվող բառեր

✓ Իմաստով իրար մոտ բառեր։

**Հարցեր**

- Ովքե՞ր են ապրում քո տան մեջ՝ թվարկիր։
- Հեղինակն ինչի՞ հետ է համեմատում մայրիկին։
- Համաձա՞յն ես հեղինակի հետ, ի՞նչ կավելացնես դու։
- Ինչպիսի՞ նկարագրություն ունի հայրիկը բնագրում,
- Համեմատի՛ր քո հայրիկի հետ։
- Ի՞նչ է տալիս քեզ քո հայրենիքը։
- Որտեղի՞ց է սկսվում քեզ համար հայրենիքը։
- Կարդա՛ տեքստի վերջին քառատողը և մեկնաբանի՛ր, թե Հայաստանն ինչի՞ հետ է համեմատել հեղինակը
- Արտահայտի՛ր կարծիքդ, իսկ ի՞նչ կավելացնես դու։
- Քեզ դուր եկա՞վ բանաստեղծության մեջ համեմատությունները, ինչու՞։
- Հզոր հայրենիք ունենալու համար մեզ ի՞նչ է անհրաժեշտ։
- Ի՞նչ ես հասկանում ընտանիք ասելով։

**Առաջադրանքներ**

- Դուրս գրել համապատասխան սյունակներում տվյալ քառատողի բանալի կամ հենակետային բառերը

| Առաջին քառատող | Երկրորդ քառատող | Երրորդ քառատող |
|---|---|---|
| | | |

- Տեքստից դուրս գրել առարկա ցույց տվող երեքական բառ
- Կազմիր «Տուն-բառարան», օրինակ՝

✚ Բանաստեղծությունից դուրս գրիր 3 շեղատառ բառերը և բնութագրիր նրանցից յուրաքանչյուրին

| | | |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

✚ Գրիր տրված բառերի հոմանիշները՝
Անշեջ
Լուսատու
Պարգև
Զավակ

## Երգ Հայրենիքի մասին /էջ 131/ 2 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Խոսելիս ճիշտ արտասանի բառերը՝ պահպանելով հայրերենի ուղղախոսական պարզ կանոնները։
♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում։
♦ Հասկանա բանաստեղծության բովանդակության և նկարագրման կապը։
♦ Զգա ժամանակի կարևորությունը և կարողանա ճիշտ պլանավորել իր անելիքները։
♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, տեղեկություններ և հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։
♦ Իմանա որտեղից ենք գալիս, որն է Հայի առանձնահատկությունը։
♦ Կարողանա արտահայտիչ կարդալ և վերարտադրել մտքերը, կառուցի կապակցված խոսք։
♦ Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։
♦ Կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ։
♦ Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։
♦ Տարբերի հոմանիշ և հականիշ իմաստները, կիրառի խոսքում
♦ Իմանա առարկա ցույց տվող բառերը։

**Առաջարկվող գործունեության ձևերը**

• Ինքնարատհայտման տարբեր ձևերով ու եղանակներով արտահայտի մտքերն ու զգացմունքները
• Կարդա բանաստեղծությունը և խոսի բովանդակության մասին։
• Մի քանի նախադասությամբ գրավոր արտահայտի կարծիքը , վերաբերմունքը տան անդամների և հայրենիքի նկատմամբ։

- Կարողանա կապ ստեղծել հայրենիքի և ընտանիքի միջև։
- Բացատրի նորածանոթ բառերն ու արտահայտությունները։
- Նկարի իր պատկերացրած հայրենիքը։
- Խմբային աշխատանքի միջոցով բացահայտի բնագրի առաջին և երկրորդ էջերի թեմատիկ նկարների բովանդակությունը։
- Խոսել Գառնիի հեթանոսական տաճարի և Գեղարդի վանքի մասին։
- Աշխատանք լեզվական նյութի շուրջ։

**Լեզվական նյութ**

✓ Առարկա ցույց տվող բառեր

✓ Իմաստով իրար մոտ բառեր։

**Հարցեր**

❖ Ի՞նչ երգեր գիտես հայրենիքիդ մասին։

❖ Քո կարծիքով հայ կոմպոզիտորներից ո՞ր մեղեդին կհամապատասխաներ բնագրին։

❖ Ի՞նչը քեզ ավելի շատ դուր եկավ բանաստեղծության մեջ և ինչո՞ւ։

❖ Ի՞նչ սովորեցիր այս բանաստեղծությունից։

❖ Ի՞նչ է Հայաստանը քեզ համար։

❖ Ի՞նչ գույներով կբնութագրես Հայաստանը, թվարկի՛ր։

❖ Ի՞նչ ես տեսնում նկարում, պատմի՛ր և համեմատի՛ր տեքստի հետ։

❖ Ի՞նչ կավելացնեիր հեղինակի թվարկած ամենալավ բաների ցանկում։

❖ Ի՞նչ վանքեր են պատկերված երկրորդ նկարում, ի՞նչ գիտես դրանց մասին։

**Առաջադրանքներ**

- Գրիր քո կարծիքը նկարի և բովանդակության մասին։
- Պատկերիր քո Հայաստանը և գունավորիր։
- Բանաստեղծությունից դուրս գրիր տեղանունները։
- Բանաստեղծությունից դուրս գիրի 8 բառապակապակցություն

| |
|---|
| |
| |
| |
| |
| |
| |

- Տեքստից դուրս գրիր «և» պարունակող բառեր ու վանկատիր։

## Վերնագիր՝ Ազգային տոն /էջ 133-134/- 3 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում, հաղորդակցվելիս պահպանի ուղղախոսական կանոնները։

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։

♦ Վերլուծի ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ։

♦ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ գրական տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում։

♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։

♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։

♦ Տարբերի հնչմամաբ և գրությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը։

♦ Ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով։

♦ Մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ։

♦ Զգա ժամանակը և ճիշտ պլանավորի իր անելիքները։

♦ Խոսքում տարբերի առարկա ցույց տվող բառերը։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Կարդալ գրական արձակ տեքստը և խոսել բովանդակության մասին։

➢ Բացատրել ընթերցած տեքստի նորածանոթ բառերը, կիրառել դրանք խոսքում։

➢ Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։

➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի վերաբերյալ։

➢ Վեր հանել հայ գրերի գյուտի մասին սովորողների նախնական գիտելիքները։

➢ Վերարտադրել տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։

➢ Խոսել մեր ազգային տոների մասին՝ հակիրճ ներկայացնելով յուրաքնչյուրի արարողակարգը, օգտագործել տոներին վերաբերող նկարներ, հոլովակներ;

➢ Ստեղծել թեմատիկ անկյուն նվիրված Մաշտոցին։

➢ Աշխատանք խմբերով։

**Լեզվական գիտելիքներ՝**

- Հնչյուն և տառ
- Գաղտնավանկ
- Առարկա ցույց տվող բառեր
- Իմաստով մոտ բառեր

**Հարցեր՝**

- Ի՞նչ է տոնը, ի՞նչ տոներ գիտես։
- Հայերն ի՞նչ ազգային տոներ ունեն։
- Ինչերո՞վ են մարդիկ ձևավորում տոնահանդեսները, թեմատիկ նկարում հին հայերը ինչերո՞վ են զարդարել տոնը։
- Ի՞նչ ես անում դու, երբ որևէ տոնի ես մասնակցում։
- Հին հայկական երաժշտական ի՞նչ գործիքների անուններ իմացար այս տեքստից, է՞լ ինչ հայկական երաժշտական գործիքներ գիտես։
- Եթե դու հորինեիր ազգային տոն, ապա ո՞րը այն կլիներ։
- Քո կարծիքով ի՞նչ տարբերություն կա ծեսի և տոնի միջև։
- Կարո՞ղ է արդյոք գրերի գյուտը տոն համարվել հայերիս համար։
- Ո՞վ է ստեղծել հայերենի այբուբենը։
- Այդ ժամանակ Հայաստանի մայրաքաղաքը ո՞րն էր։
- Ինչո՞ւ էր ամբողջ ժողովորդը բակ դուրս եկել։
- Ինչե՞ր էին մարդիկ իրար նվիրում ;
- Ի՞նչ եք կարծում `այս բնագրում նկարագրված ցնծությունը ինչի՞ համար էր։
- Իսկ ո՞րն է քո պարտականությունը, ի՞նչ պետք է անես, որ մաքուր ու անարատ պահես հայոց լեզուն։
- Արդյոք ուզու՞մ ես արժանի թոռնիկ լինել Մեսրոպ Մաշտոցին։
- Դարեր շարունակ ի՞նչն է մեզ պաշտպանել։
- Բնագրի ո՞ր հատվածն է համապատասխանում նկարազարդմանը, մեկնաբանի՛ր։

**Առաջադրանքներ՝**

✓ Կարդա՛ և տեքստից դո՛ւրս գրիր այն առարկաների անունները, որոնցով ժողովուրդը զարդարել էր փողոցներն ու հրապարակները։

✓ Կարդա՛ այն տողերը, որտեղ խոսվում է ժողովրդի ուրախության մասին։

✓ Տեքստից դու՛րս գրիր հիմնական միտքն արտահայտող նախադասությունը։

✓ Գրի՛ր տեքստում քո տեսածի, լսածի և զգացածի մասին, տեքստին տու՛ր նոր վերնագիր ։

| | |
|---|---|
| Ի՞նչ տեսա | Ի՞նչ զգացի |
| Ի՞նչ լսեցի | Նոր վերնագիր |

✓ Լրացրու՛ և ձևավորի՛ր տեքստի մասին հետևյալ թռուցիկը։

# Վերնագիր՝ Մանուկ Դավիթը /էջ 135-137/ -4 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Իմանա որոշ տեղեկություններ հայկական էպոսի մասին։

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։

♦ Վերլուծի ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ։

♦ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ գրական տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում։

♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։

♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։

♦ Տարբերի հնչմամաբ և գրությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը։

♦ Կիրառի մայրենի լեզուն՝ հաղորդակցվելիս պահպանելով լեզվի ճշտությունը։

♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում։

♦ Լսի, հասկանա և համապատասխան արձագանք տա լսածին։

♦ Նկարագրի մարդկանց, վայրեր, իրադարձություններ՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացմունքները։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Հակիրճ պատմել հայկական էպոսի մասին /էպոսի անվան մեկնաբանում՝ Սասուն, ծուռ/։

➢ Զրուցել որոշ հայ հերոսների, նրանց դյուցազնական արարքների մասին։

➢ Բացատրել ընթերցած տեքստի նորածանոթ բառերը, կիրառել դրանք խոսքում։

➢ Արտահայտել մտքերն ու զգացումները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։

➢ Վերարտադրել տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։

➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն դիտած մուլտֆիլմի՝ <<Սասունցի Դավիթը>>, վերաբերյալ։

➢ Պատմել Սասունցի Դավթի արձանի մասին։

➢ Կարդա տեքստը, խոսի բովանդակության մասին։

➢ Նկարագրի սեփական բնակավայրը, փորձի համեմատել Դավթի բնակավայրի հետ։

**Լեզվական գիտելիքներ՝**

- Առարկա ցույց տվող բառեր
- Գործողություն ցույց տվող բառեր

**Հարցեր՝**

- Ու՞մ մասին է հայկական էպոսը։
- Սասունցի Դավիթը գրակա՞ն հերոս է, թե՞ իրական։
- Ինչպիսի՞ն էր մանուկ Դավիթը։
- Ի՞նչ արտասովոր հատկություններ ուներ Սասունցի Դավիթը։
- Քո իմացած հերոսներից ո՞ր հայ հերոսին կնամանացնես Սասունցի Դավթին, ինչու՞։
- Ի՞նչ էր սիրում Դավիթը և ինչպե՞ս էր մեծանում։
- Ի՞նչ չէր սիրում Դավիթը։
- Ինչպիսի՞ քաջագործություններ էր կատարում մանուկ Դավիթը։
- Ո՞վ էր Դավթի հորեղբայրը։
- Ինչու՞ էր հորեղբայրը Դավթի համար երկաթե ոտնաման գնել։
- Ինչու՞ է ժողովուրդը ժայռը կոչել Դավթի քար անվամբ, ի՞նչ է պատմում ավանդությունը, պատմի՛ր։
- Համեմատի՛ր նկարը տեքստի բովանդակության հետ։

**Առաջադրանքներ՝**

✓ Նկարագրի՛ր Սասունցի Դավթին, նրա արտաքինն ու բնավորությունը։

✓ Տեքստում կարդա՛ այն հատվածը, որտեղ նկարագրվում է Դավթի բնավորության մասին։

✓ Դու՛րս գրիր այն նախադասությունները, որոնք արտահայտում են Դավթի ոչ սովորական հատկանիշները։

✓ Ստեղծի՛ր ծննդյան վկայական Սասունցի Դավթի մասին։

ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Անունը՝
Ազգանունը՝
Ազգությունը՝
Ծննդավայրը՝
Ազգականները՝
Բնավորությունը՝
Սիրում է՝
Չի սիրում՝

✓ Նկարագրի՛ր Սասունցի Դավթի արձանը և Դավթի քարը, մեջտեղում գրի՛ր նմանություններ։

| Սասունցի Դավթի արձան | Նմանություն | Դավթի քար |
|---|---|---|
| | | |

✓ Տեքստից դու՛րս գրիր 10 գործողություն ցույց տվող բառեր։

✓ Տեքստից դու՛րս գրիր հատուկ անունները և բացատրի՛ր, թե դրանք ինչերի՞ անուններ են։ Այդ բառերից 4-ը գործածի՛ր նախադասությունների մեջ։

✓ Տրված անձ և իր ցույց տվող բառերը գրի՛ր առանձին սյունակներում։

Հայաստան, Վաղարշապատ, Միեր, Մասիս, Սիս, Մեսրոպ Մաշտոց, Եղեսիա, Երևան, Սևան, Չալո, Պույ-պույ մկնիկ, Բեմբի, Հովհաննես Թումանյան, Դեթղեհեմ, Սուրբ Ծնունդ, Ֆրիդերիկ Շոպեն, Անդերսեն։

| Անձ ցույց տվող | Իր ցույց տվող |
|---|---|
| | |

## Վերնագիր՝ Այծեմնիկը /էջ 141-142/- 3 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։

♦ Իմանա որոշ հայ հերոսների, նրանց կատարած սխրանքների մասին։

♦ Վերլուծի ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ։

♦ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ գրական տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում։

♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։

♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։

♦ Տարբերի հնչմամաբ և գրությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը։

♦ Կիրառի մայրենի լեզուն՝ հաղորդակցվելիս պահպանելով լեզվի ճշտությունը։

♦ Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում։

♦ Լսի,հասկանա և համապատասխան արձագանք տա լսածին։

♦ Արտահայտիչ կարդա,պատմի բնագիրը՝ ներկայացնելով հիմնական գաղափարը։

♦ Իր հույզերն ու մտքերը արտահայտի ժեստերի ,դիմախաղի միջոցով։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Պատմել հայ ժողովրդի անցած պատմական ուղուց որոշ փաստեր։

➢ Զրուցել որոշ հայ հերոսների /ֆիդայիների, ֆիդայի Սոսե/, նրանց կատարած սխրանքների մասին։

➢ Բացատրել ընթերցած տեքստի նորածանոթ բառերը, կիրառել դրանք խոսքում։

➢ Արտահայտել մտքերն ու զգացմունքները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։

➢ Վերարտադրել տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, գործող անձանց վերաբերյալ և բաժանելով տրամաբանական մասերի։

➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի վերաբերյալ։

➢ Նկարագրի իր բնակավայրը ,վերլուծի առկա խնդիրներն ու մտածի դրանց լուծման ուղիների մասին՝ կազմակերպելով խմբային քննարկումներ ։

➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի շուրջ։

➢ Արևմատյան Հայաստանը ներկայացնող տարբեր տեսարժան վայրերի նկարների ցուցադրում և տեղեկություններ դրանց մասին։

➢ Ներկայացնել հայրենիքը ,նրա նվիրյալներին,հայրենասիրության դրսևորումներ ։

**Լեզվական գիտելիքներ՝**

- Առարկա ցույց տվող բառեր
- Գործողություն ցույց տվող բառեր

**Հարցեր՝**

- Հայերն ինչու՞ էին պաշտպանում իրենց հայրենիքը։
- Որտե՞ղ էին ընթանում տեքստում նկարագրվող դեպքերը։
- Ինչպիսի՞ աղջիկ էր Այծեմնիկը։
- Ովքե՞ր էին Այծեմնիկի զինվորները։
- Ի՞նչ քաջագործություններ էին անում Այծեմնիկն ու մյուս հայուհիները։
- Ի՞նչ զենքերով էին կռվում հին հայերը, ի՞նչ զենքերի մասին գիտես։
- Նրանք ինչի՞ օրինակ պետք է ծառայեն քեզ համար։
- Քո կարծիքով ովքե՞ր հաղթեցին այդ կռվում, ինչու՞։
- Քո իմացած ո՞ր հերոսին կնմանեցնես Այծեմնիկին։
- Թշնամին ո՞ր մայրաքաղաքն էր պաշարել, որքա՞ն ժամանակ քաղաքը պաշարված մնաց։
- Հայերն ինչպե՞ս էին պաշտպանում Անին։
- Այծեմնիկի հերոսական արարքը ո՞ւմ էր զարմացրել։

**Առաջադրանքներ՝**

✓ Դո՛ւրս գրիր Այծեմնիկի մասին պատմող հատվածը։

✓ Տեքստից դու՛րս գրիր այն տողերը, որոնցում նկարագրվում է հայերի պայքարը։

✓ Լրացրու՛ նախադասությունը՝ օգտվելով տեքստի բառերից։

Հայրենասերը նա է, …

Օրինակ՝

*Հայրենասերը նա է, ով պաշտպանում է իր հայրենի քաղաքը։*

✓ Գրի՛ր փոքրիկ շարադրություն Այծեմնիկի մասին։

✓ Տեքստից դու՛րս գրիր հետևյալ գործողություն ցույց տվող բառերի իմաստով մոտ բառերը։

Հզորացնում էին, թափվում էին, մարտնչում էր, չէին երկյուղում, գրոհեց, ուժեղանում էր, խփում էր։

✓ Տեքստից դու՛րս գրիր գործողություն ցույց տվող 10 բառ։

✓ Նկարի շուրջ կազմի՛ր ոչ ծավալուն պատմություն։

✓ Պաշարել, միջնաբերդ, խիզախ, խոցել, դար բառերով կազմի՛ր բառակապակցություններ։

✓ Փորձի՛ր ասել՝ ի՞նչ հարցերի են պատասխանում այս բառերը և գրի՛ր դրանք երկու սյունակով։

*Ուտել, մրսել, խմել, կարմրել, հիվանդանալ, կարդալ, զբոսնել, մեծանալ, երգել, երկարել, գրել, բացվել։*

| | |
|---|---|
| | |

- ✓ Յուրաքանչյուր խմբից երկուական բառ գործածի՛ր նախադասությունների մեջ:
- ✓ Լրացրու՛ համապատասխան սյունակները:

| | |
|---|---|
| Ի՞նչ լսեցի | Ի՞նչ զգացի |
| Ի՞նչ տեսա | Նոր վերնագիր |

## Վերնագիր՝ Քաջ Վարդանը /էջ 144-145/- 4 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Ճանաչի և սիրի իր հայրենիքը, հոգատար վերաբերմունք ունենա նրա նկատմամբ։
♦ Իմանա որոշ հայ հերոսների, նրանց կատարած սխրանքների մասին։
♦ Իմանա Սուրբ Վարդանանց տոնի, Ավարայրի ճակատամարտի մասին։
♦ Վերլուծի ընթերցած տեքստի հերոսների վարքն ու վերաբերմունքը տեքստում նկարագրվող իրադարձությունների նկատմամբ։
♦ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ գրական տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում։
♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։
♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։
♦ Տարբերի հնչմամաբ և գրությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը։
♦ Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում։
♦ Ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության մասին։
♦ Արտահայտի սեփական մտքերը , զգացմունքները, կարիքները և ցանկությունները։
♦ Պատմի ապրածը, դիտածը, ընթերցածը ,արտահայտի սեփական մտքերը։
♦ Խոսելիս ճիշտ արտասանի բառերը,պահպանի հայերենի ուղղախոսական պարզ կանոնները։
♦ Խոսքում տարբերակի առարկա, գործողություն ցույց տվող բառեր։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Պատմել հայ ժողովրդի անցած պատմական ուղուց որոշ փաստեր։
➢ Զրուցել որոշ հայ հերոսների, նրանց կատարած սխրանքների մասին։
➢ Բացատրել ընթերցած տեքստի նորածանոթ բառերը, կիրառել դրանք խոսքում։
➢ Արտահայտել մտքերն ու զգացմունքները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։
➢ Վերարտադրել տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, գործող անձանց վերաբերյալ։
➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի վերաբերյալ, ստեղծագործաբար ներկայացնել հերոսների սխրագործությունը ։
➢ Գրավոր արտահայտել սեփական հույզերը լսածի վերաբերյալ։
➢ Տեքստից հարցերի միջոցով առանձնացնել առարկա, գործողություն ցույց տվող բառերը։
➢ Հերոսների նկարների ցուցադրում ,պաստառի պատրաստում։

➢ Խմբային աշխատանքի միջոցով ներկայացնել ծանոթ նորօրյա հերոսներից որևէ մեկի մասին, արտահայտել մտքերն ու հույզերը, կապել Վարդան Մամիկոնյանի սխրագործությունները մեր նորօրյա կյանքի հետ։

**Լեզվական գիտելիքներ՝**

- Առարկա ցույց տվող բառեր
- Գործողություն ցույց տվող բառեր

**Հարցեր՝**

- Ինչու՞ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը, ինչու՞ այն կոչվեց Ավարայրի։
- Հայ ժողովուրդը ում ընտրեց հրամանատար, ինչու՞։
- Ինչպիսի՞ կռիվ էր ընթանում, ինչպե՞ս էին կռվում հայերը։
- Ե՞րբ են հայերը տոնում Սուրբ Վարդանանց տոնը, ինչու՞ է այն կոչվում այդպես։
- Ովքե՞ր հաղթեցին այդ կռվում, ինչու՞։
- Քո իմացած ո՞ր հերոսին կնմանեցնես Վարդան Մամիկոնյանին։
- Ի՞նչ դասեր պետք է քաղես այս պատմությունից։
- Ո՞ր զորքն էր իր թվաքանակով շատ։
- Պարսիկներն ինչո՞ւ էին փղեր հանել հայերի դեմ։
- Ովքե՞ր էին տղամարդկանց հետ հավասար կռվում, ինչո՞ւ։
- Հերոսական կռվի պահին ովքե՞ր զոհվեցին։
- Որտե՞ղ է մի հսկա կաղնի տնկել Վարդան Մամիկոնյանը և ինչպե՞ս է այն կոչվում։

**Առաջադրանքներ՝**

✓ Տեքստից դո՛ւրս գրիր Վարդան Մամիկոնյանի մասին պատմող տողերը։
✓ Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը, դու՛րս գրիր համապատասխան նախադասությունը։
✓ Գրի՛ր փոքրիկ շարադրություն Վարդան Մամիկոնյանի մասին։
✓ Տեքստից դու՛րս գրիր 5-ական առարկա, գործողություն ցույց տվող բառեր։

| Առարկա ցույց տվող բառեր | Գործողություն ցույց տվող բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |

✓ Ստեղծի՛ր <<Ծննդյան վկայական>> Վարդան Մամիկոնյանի մասին։

**Անուն՝**
**Ազգանունը՝**
**Ազգությունը՝**
**Կրոնը՝**
**Կռվել և զոհվել է/**ճակատամարտ, տարի, ամիս, օր/՝
**Բնավորությունը՝**
**Սրբություն էին՝**

✓ Առարկա և գործողություն ցույց տվող հետևյալ բառերից կազմի՛ր ճիշտ զույգեր և գրի՛ր օրինակի պես։
Գիր, մեխել, թերթ, կռվել, թերթել, սղոց, ներկել, գրել, մեխ, տոն, ներկ, սղոցել, տոնել, կռիվ, ճանկ, ճանկել։
Օրինակ՝ գիր-գրել։
Առարկայի գործողություն ցույց տվող երեք բառ գործածի՛ր նախադասությունների մեջ։
✓ Գործողություն ցույց տվող հետևյալ բառերը խմբավորի՛ր ըստ տրված հարցերի։
Գրավել, մոռանան, հրամայեց, քանդել, խոսեն, կռվում էին, պաշտպանում էին, տոնում է, պահում է, մերժեց, որոշեց, փոխեն, ոչնչացնել, պատժել։

Օրինակ՝ ի՞նչ անել-ոչնչացնել,….
ի՞նչ է անում-….
ի՞նչ արեց-….
ի՞նչ էին անում-….
ի՞նչ անեն-…..

✓ Կարդա՛ Վարդան Մամիկոնյանի պատգամը և քո բառերով բացատրի՛ր ընկերներիդ։
**Չերկնչե՛ք և չվախենա՛ք հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունեք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնեք։**

✓ Համեմատի՛ր քաջ Վարդանին ու Այծեմնիկին։

| Վարդան Մամիկոնյան | Այծեմնիկ |
|---|---|
| | |

## Վերնագիր՝ Անմահ գանձերը /էջ 149/- 3 ժամ

**Վերջնարդյունքներ՝**

♦ Իմանա Մեսրոպ Մշտոցի, Մատենադարանի մասին։
♦ Իմանա հայոց մայր գետի՝ Արաքսի, բիբլիական Արարատի մասին։
♦ Արժևորի հայ գրերի գյուտը՝ որպես ազգի փրկության միջոց։
♦ Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի չափածո գրական տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում։
♦ Սեփական բառերով վերարտադրի տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ։
♦ Հասկանա տեքստի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։
♦ Տարբերի հնչմամաբ և գրությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը։
♦ Արժևորի մայրենի լեզվի դերն իր կյանքում ։
♦ Անկաշկանդ արտահայտի մտքերը՝ պատասխանելով իրեն ուղղված հարցերը։
♦ Հարգանքով վերաբերվի մայրենի լեզվին՝ դրսևորելով այն ճիշտ և տեղին կիրառելու պատրաստակամություն։
♦ Խոսքում տարբերի առարկա, գործողություն ցույց տվող բառերը։

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Հակիրճ պատմել հայ ժողովրդի մասին Նոյյան տապանից մինչ այսօր։
➢ Զրուցել Մաշտոցի, նրա կատարած սխրանքի, նրա անունը կրող կառույների մասին։
➢ Պատմել Մատենադարանի մասին։
➢ Բացատրել ընթերցած տեքստի նորածանոթ բառերը, կիրառել դրանք խոսքում։
➢ Արտահայտել մտքերն ու զգացմունքները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ։
➢ Վերարտադրել տեքստը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, գործող անձանց վերաբերյալ։
➢ Հյուսել ոչ ծավալուն պատմություն թեմատիկ նկարի վերաբերյալ։
➢ Տեքստից հարցերի միջոցով առանձնացնել առարկա, գործողություն ցույց տվող բառերը։
➢ Մի քանի նախադասությամբ գրավոր արտահահտի կարծիքը, վերաբերմունքը։
➢ Բացատրի նորածանոթ բառերն ու արտահայտությունները։

**Լեզվական գիտելիքներ՝**

- Առարկա ցույց տվող բառեր
- Գործողություն ցույց տվող բառեր

**Հարցեր՝**

- Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը։
- Որտե՞ղ է Մաշտոցը դաս տալիս հայ մանկիկին, ինչու՞։
- Վեց տարեկան մանուկն ի՞նչ էր ժառանգում մեծ Մաշտոցից. ինչե՞րն են այդ անմահ գանձերը։
- Քո կարծիքով ինչու՞ են բանաստեղծության մեջ <<ա>> տառը, արև, Արարատ, Արաքս բառերն ընդգծված։
- Ի՞նչ է սուրբը, ինչու՞ են Մաշտոցին անվանում սուրբ։
- Մատենադարանը որտե՞ղ է գտնվում, ինչե՞ր են պահվում այնտեղ։
- Դո՞ւ որ ժառանգության մասին կխոսերիր, ինչո՞ւ։

**Առաջադրանքներ՝**

✓ Բանաստեղծությունից դու՛րս գրիր <<ա>> հնչյուն-տառով սկսվող բառերը։

✓ Դու՛րս գրիր ***ընդգծված*** բառերը և գրի՛ր նրանց տառերի, հնչյունների քանակը։

✓ Գրի՛ր, թե ի՞նչ էր կատարվում, երբ մանուկն արտասանում էր հետևյալ պատկերներն արտահայտող բառերը։

,
,

✓ Քո կարծքով ինչե՞րն են Մաշտոցի անմահ գանձերը, գրի՛ր։

✓ Դու՛րս գրիր գործողություն ցույց տվող բառերը, դրանցից հնչմամբ և գրությամբ տարբերվող բառերը գործածի՛ր նախադասության մեջ։

✓ Տեքստին հետևելով լրացրու՛ բառերում բաց թողնված տառերը և գրի՛ր համապատասխան այունակում։

**Ար.ան, հո.ի, բար.բանալ, Մատենա.բան, եր.անցի, ժա.անգել, շո.ալ, գեղգե.ալ։**

| Առարկա ցույց տվող բառեր | Գործողություն ցույց տվող բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

✓ Օգտվելով բանաստեղծությունից՝ գրի՛ր տրված բառերին իմաստով մոտ բառեր։

ջինջ-

ջերմանալ-

սեգ-

գեղգեղել-

✓ Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր 10-ական առարկա և գործողություն ցույց տվող բառեր։

## Վերնագիր՝ Ամփոփում -2 ժամ

**Առաջարկվող գործունեության ձևեր՝**

➢ Պատմել Հայաստանի, հայ ժողովրդի, ՀՀ խորհրդանիշների մասին:
➢ Իմանալ որոշ հայ հերոսների, նրանց գործած սխրանքների մասին:
➢ Արտահայտել մտքերն ու զգացմունքները՝ կիրառելով ինքնարտահայտման տարբեր ձևեր և եղանակներ:
➢ Վերաբերմունք դրսևորելով նկարագրել թեմայի տեքստերի գործող անձանց, ներկայացնել նրանց միջև տարբերություններն ու նմանությունները:
➢ Նկարագրել իր բնակավայրը:
➢ Ձևավորել ստեղծագործական անկյուն <<Իմ անուշիկ Հայաստան>> խորագրով:
➢ Առանձնացնել առարկա, գործողություն ցույց տվող բառերը:

**Լեզվական գիտելիքներ՝**

- Գործողություն ցույց տվող բառեր

**Հարցեր՝**

- Որո՞նք են ՀՀ խորհրդանիշները, ի՞նչ են խորհրդանշում դրոշի գույները:
- Դու ի՞նչ ես պատկերացնում Հայաստան ասելիս:
- Բացատրի՛ր հայրենիք, հայրենասիրություն բառերի իմաստը:
- Ո՞ր հայ հերոսների մասին իմացար այս թեման անցնելիս, է՞լ ինչ հայ հերոսների գիտես:
- Քո կարծիքով թեմայի ո՞ր հերոսներն են նման, ինչու՞:

**Առաջադրանքներ՝**

♦ Թեմայի տեքստերից դու՛րս գրիր 10 բառ, որոնք կօգտագործես Հայաստանի մասին պատմելիս:

Օրինակ՝ հայրենիք, Երևան,… :

♦ <<Հայ>> բառով կազմի՛ր նոր բառեր և գրի՛ր:

Օրինակ՝ հայկական, Հայկուհի, …:

♦ Հայաստան բառով կազմի՛ր և գրի՛ր 4 բառակապակցություն:

♦ Լրացրու՛ նախադասությունները՝ օգտվելով թեմայի տեքստերից:

➢ Հույս ու լույս է տալիս մեզ
Եվ անունն է՝ ---------- :
➢ Մանկությունից քաջ էր ---------- ու համարձակ:
➢ Երբ արև էր արտասանում,
--------- աշխարհն էր ջերմանում:
➢ Եվ հայը մնաց ---------- , երկիրը՝ ---------- :

♦ Նկարներից ընտրի՛ր <<**հայկական**>> պատկերներ արտահայտող բառերը և գործածի՛ր նախադասությունների մեջ։

♦ Կազմի՛ր <<**Ծննդյան վկայական**>> Հայաստանի մասին՝ լրացնելով բաց թողնված բառերը։

Անունը՝ ----------

Բնակչությունը՝-------

Կրոնը՝----------

Մայրաքաղաքը՝-------

Խորհրդանիշները՝----

Ազգային տոները՝-----

♦ Թեմայի տեքստերից դու՛րս գրիր 5 -ական հատուկ և հասարակ անուններ։

| Հատուկ անուն | Հասարակ անուն |
|---|---|
| | |
| | |
| | |

♦ Գրի՛ր 3-ական բան հին Հայաստանի, այժմյան Հայաստանի և քո պատկերացմամբ՝ ապագա Հայաստանի մասին։

| Հին Հայաստան | Այժմյան Հայաստան | Ապագա Հայաստան |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

♦ https://www.youtube.com/watch?v=XeTRkzcwmME

Ունկնդրի՛ր Հ. Սահյանի <<Հայաստան ասելիս>> բանաստեղծությունը և լրացրու՛ տողերը քո հորինած արտահայտություններով։

Հայաստան ասելիս……,

Հայաստան ասելիս……,

Հայաստան ասելիս……: